ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Գ Լ Խ Ա Վ Ո Ր Ք Ա Ր Տ Ո Ւ Ղ Ա Ր

Հայաստանի Հանրապետություն, 0010, ք. Երևան, Տիգրան Մեծ 4, հեռ.՝ (+374 60) 830 840, (+374 60) 830 850
Էլ-փոստ՝ info@competition.am, վեբ կայք՝ //www.competition.am

«28» 04 2022թ.
No 000965

«ԱԿՎԱՅԱՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ՊԱՐՈՆ ԴԱՎԻԹ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ
(հասցե՝ Կոտայքի մարզ, Բալահովիտ, 42 փող., 2-րդ փկղ., թիվ 2)

Հարգելի՛ պարոն Մաթևոսյան,

Կից ուղարկվում է Մրցակցության պաշտպանության հանձնաժողովի 2022 թվականի ապրիլի 26-ի «Թիվ ՀԳ-00046/22 վարույթի ժամկետը երկարաձգելու մասին» թիվ 164-Ա որոշման պատճենը:

Առդիր՝ «2» թերթ:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ **ԱՇՈՏ ՎԱՀԱՆՅԱՆ**

Կատարող՝ Նարինե Անանյան
Անբարեխիղճ մրցակցության վերահսկողության վարչություն
Հեռ. (+374 60) 830-840 (243)

competition.am կայքում հրապարակման օրը՝ 24 մայիսի 2022 թվական:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

26 ապրիլի 2022 թվականի թիվ 164-Ա

ԹԻՎ ՀԳ-00046/22 ՎԱՐՈՒՅԹԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը (այսուհետ նաև՝ **Հանձնաժողով**) 2022 թվականի ապրիլի 26-ի նիստում, քննարկելով թիվ ՀԳ-00046/22 վարույթի ժամկետը երկարաձգելու մասին հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց

Հանձնաժողովը 2022 թվականի փետրվարի 8-ին ««Ակվայան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տնտեսական մրցակցության բնագավառում իրավախախտման վերաբերյալ վարույթ հարուցելու մասին» թիվ 43-Ա որոշմամբ հարուցել է թիվ ՀԳ-00046/22 վարույթը (այսուհետ նաև՝ **Վարույթ**):

Վարույթը հարուցվել է «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի (այսուհետ նաև՝ **Օրենք**) 76-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիմքով, այն է՝ Հանձնաժողովի լիազորությունների իրականացման ընթացքում «Ակվայան» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **Ընկերություն**) կողմից ջրօգտագործման թույլտվության և աղբյուրի ջրի ձեռքբերման վերաբերյալ տվյալների բացակայության պայմաններում «աղբյուրի ջուր» մակնշումով ապրանքներ իրացնելու միջոցով հասարակության մոլորեցման դրսևորմամբ առերևույթ անբարեխիղճ մրցակցության հատկանիշների հայտնաբերման առիթով:

Վարույթի շրջանակում պարզաբանման ենթակա մի շարք հարցերի վերաբերյալ Հանձնաժողովը՝ Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի ապրիլի 18-ի թիվ 000439 գրությամբ (այսուհետ նաև՝ **թիվ 000439 գրություն**), դիմել է Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին դիրքորոշում ստանալու նպատակով, իսկ Հանձնաժողովի նախագահի 2022 թվականի ապրիլի 15-ի թիվ 000558 գրությամբ (այսուհետ նաև՝ **թիվ 000558 գրություն**)՝ «Վեոլիա Ջուր» ընկերությանը տեղեկատվություն ստանալու նպատակով:

Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը, ի պատասխան թիվ 000439 գրության, 2022 թվականի ապրիլի 25-ին Հանձնաժողով է ներկայացրել թիվ 000807 գրությունը (այսուհետ նաև՝ **թիվ 000807 գրություն**), իսկ «Վեոլիա Ջուր» ընկերությունը պահանջված տեղեկատվությունը 2022 թվականի ապրիլի 26-ի դրությամբ չի ներկայացրել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ թիվ 000558 գրությամբ պահանջված տեղեկատվությունը ստանալու և թիվ 000807 գրությամբ ներկայացված դիրքորոշումը վերլուծելու, ինչպես նաև դրանց հաշվառմամբ գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննությունն իրականացնելու նպատակով վարույթի իրականացման՝ Օրենքով սահմանված եռամսյա ժամկետը բավարար չէ՝ Հանձնաժողովն արձանագրում է, որ առաջացել է Վարույթի ժամկետը երկարաձգելու անհրաժեշտություն:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով Օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասով, 42-րդ հոդվածի 2-րդ մասով՝ Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Թիվ ՀԳ-00046/22 վարույթի ժամկետը երկարաձգել 2022 թվականի մայիսի 8-ից՝ եռամսյա ժամկետով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՆԱԽԱԳԱՀ **Գ. ԳԵՎՈՐԳՅԱՆ**

2022 թ. ապրիլի 27
Երևան